Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/10 ծածկագրով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 մայիսի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Սարգսյանց
Հանձնաժողովի անդամներ՝	Ն. Մարտիրոսյան /գնահատող/
	Կ. Երիցյան /գնահատող/
	Ա. Քոչարյան /բացող/
	Վ. Առաքելյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա.Սարգսյանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա.Սարգսյանց)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա.Սարգսյանց)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ՏԵԽ ԴՐԱՖՏ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Սարգսյանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների բաժնում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Սարգսյանց

Անդամ՝ ---------- Ն. Մարտիրոսյան

---------- Կ. Երիցյան

---------- Ա. Քոչարյան

---------- Վ. Առաքելյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան